



ՔԱՂՎԱԾՔ

Ռեկտորատի 2020 թ. մայիսի 13-ի նիստի թիվ 0210 արձանագրությունից

ԼՄԵՑԻՆ. Պրոռեկտոր Ռ.Աղզաշյանի հաղորդումը՝ ՀԱՊՀ-ում «Դասավանդման արդի տեխնոլոգիաներ կիրառող տարվա լավագույն դասախոս» մրցանակ սահմանելու առաջարկությամբ: Նա նշեց, որ այն կգա լրացնելու Համալսարանում գործող տարբեր նամինացիաների շարքը և կխթանի «դասավանդում/ուսումնառում» գործընթացների արդյունավետության հետագա բարձրացման, ընդհանրապես, և, որ ամենակարևորն է, կմոտիվացնի և կխրախուսի այն դասախոսներին, ովքեր անընդհատ ձգտում են ուսանողների մոտ պահպանել աճող հետաքրքրություն ուսումնասիրվող նյութի նկատմամբ՝ հրամցելով այն ներկայիս արագ աճող պահանջներին համահունչ տեխնոլոգիական և մեթոդաբանական նոր հնարավորություններով: Նշվեց նաև, որ վերջինիս անհրաժեշտությունն ու կարևորությունն առանձնապես ցայտուն արտահայտվեցին կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ իրադրությունում առցանց ուսումնառության անցման անհրաժեշտության համատեքստում, ինչը հետագայում նույնպես իր ուրույն տեղը կունենա դասական մեթոդներին զուգահեռ: Հարցի շուրջ մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀԱՊՀ ռեկտոր պրոֆ. Ռ.Մարտիչյանը, պրոռեկտորներ Մ.Բաղդասարյանը, Գ.Վարդանյանը և ռեկտորատի մի շարք այլ անդամներ, ովքեր լիովին պաշտպանեցին առաջարկը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հավանություն տալ Համալսարանում «Դասավանդման արդի տեխնոլոգիաներ կիրառող տարվա լավագույն դասախոս» անվանակարգով մրցանակ սահմանելու առաջարկին՝ մրցույթի հաղթողների համար նախատեսելով 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մեկական դրամական մրցանակ՝ 125, 100 և 75 հազար արժողությամբ, համապատասխանաբար:
2. Հանձնարարել պրոռեկտոր Ռ.Աղզաշյանին՝ մշակել նշված մրցանակների շնորհման կարգի նախագիծ՝ սահմանված կարգով ՀԱՊՀ Գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը ներկայացնելու համար:

Նախագահ  Ռ. ՄԱՐՈՒԽՅԱՆ

Քարտուղար 
 